ԵՂԱՆԱԿԸ ԼՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 10-12-ին հանրապետության տարածքը կգտնվի արևադարձային տաք օդային հոսանքների ազդեցության գոտում, հատկապես հովտային գոտիներում սպասվում է բարձր ջերմային ֆոն և բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակ, գյուղատնտեսական մշակաբույսերի մոտ կդիտվի ջրազրկում, որից խուսափելու համար անհրաժեշտ է խիստ կերպով վերահսկել ոռոգման ռեժիմը: Ազգաբնակչությանը խորհուրդ է տրվում խուսափել ֆիզիկական ակտիվությունից և արեգակի անմիջական ճառագայթների տակ գտնվելուց, հատկապես առողջական խնդիրներ ունեցող անձանց:

Պայմանավորված համեմատաբար սառը օդային հոսանքների ներթափանցման հետ, օգոստոսի 7-9-ին օդի ջերմաստիճանը հանրապետության տարածքում աստիճանաբար կնվազի 7-8 աստիճանով:

Այս գիշեր և վաղը երեկոյան ժամերին հնարավոր է կարճատև անձրև և ամպրոպ: Քամին՝ հարավ-արևմտյան 3-5մ/վրկ արագությամբ, ամպրոպի ժամանակ հնարավոր է քամու ուժգնացում՝ 15-18մ/վրկ:

Օդի ջերմաստիճանը 8-ին գիշերը՝ +12… +17^0 C, ցերեկը՝ +25… +30^0 C , 9-ին գիշերվա առաջին կեսին հնարավոր է կարճատև անձրև և ամպրոպ, ցերեկը առավելապես առանց տեղումների, ջերմաստիճանը էապես չի փոխվի:

10-12-ին առանց տեղումների եղանակ, ջերմաստիճանը աստիճանաբար կբարձրանա 7-8 աստիճանով: